ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լալիկ Խաչատրյան

Բանասիրական գիտությունների դոկտոր
Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի 17
Էլ. հասցե՝ lingualal51@mail.ru

Լիլիթ Խաչատրյան

Բանասիրական գիտությունների թեկնածու
Համազգային Արևմտյան շրջանի գրական միավորում, Լոս Անջելես, ԱՄՆ
Էլ. հասցե՝ lilitellen@yahoo.com
Հոդվածը ներկայացվել է 16.11.2020, գրախոսվել է 19.11.2020,
ընդունվել է տպագրության 07.03.2022
DOI:10.53548/0320-8117-2022.1-115
ՀՏԴ:809.198.1

Ներածություն

Թվի քերականական կարգն արտահայտում է քանակայնության գաղափար, որ տարածվում է ինչպես հաշվելի և անհաշվելի գոյականների, այնպես էլ հատկանշային խոսքի մասերի վրա: Քանակի կամ թվի ըմբռնումը ներառում է եզակի (մեկ) և հոգնակի (մեկից ավելի) հասկացություններ, որոնք քերականորեն և բառայնորեն տարբեր արտահայտություններ ունեն:

Հին հայերենում գոյականի եզակի թիվը նշույթավորված չէ. իբրև քերականական իմաստի արտահայտման միջոց՝ հանդես է գալիս բառի ուղիղ ձևը, որ հատկանշվում է զրո ձևույթով: Ի հակադրություն զրո ձևույթի՝ հոգնակի թիվը նշույթավորված է. հոգնակիության գաղափարն արտահայտվում է թվանիշ թեքույթների միջոցով, որոնք բառը (բառույթը) վերածում են բառաձևի:

Թվանիշ թեքույթները, որպես թվանիշ վերջավորություններ կամ թվանիշ մասնիկներ, ավելանում են գոյականական հիմքի վրա. լեզվում բոլոր հիմքակազմ տարրերը կամ բոլոր ձևավոր հիմքերը չեն կարող թվանշային զուգորդություններ կազմել թվանիշ վերջավորությունների հետ,

քանի որ թե՛ առաջինները և թե՛ վերջինները դիրքային սահմանափակություններ ունեն, հետևաբար թվանիշ վերջավորությունները կարող են հանդիպել միայն որոշ տիպի հիմքերի հետ: Թվանիշ թեքույթները հաճախ փոխում են հիմքի կառուցվածքը: Այդ փոփոխությունը ներառում է ինչպես հիմքի հնչյունական կառուցվածքը, այնպես էլ նրա (հնչ)արտաբերությունը:

Առաջին դեպքում գործ ունենք հիմքի հնչյունափոխության, երկրորդ դեպքում՝ շեշտափոխության երևույթների հետ: Այս իրողությունները դիտվում են թվանիշ հիմքերի կազմիչներ կամ հիմքակազմ տարրեր: Հենց այդ գործոններով էլ պայմանավորված են թվակազմիչ հիմքերի «մաքուր» և «ձևավոր» տեսակները[1]:

Թվանիշ թեքույթներն ավելանում են ձևավոր հիմքերին՝ կազմելով հոգնակի թվի ձևեր. եզակի թվում գոյականը (գոյականական հիմքը) հատկանշվում է զրո ձևույթով (թեքույթով). հետևաբար եզակի-հոգնակի հակադրության պլանում առկա են մի կողմում՝ զրո հիմքակազմ տարրով և զրո ձևույթով արտահայտված հիմքեր, մյուս կողմում՝ որոշակի հիմքակազմ տարրերով (չբացառելով զրո հիմքակազմ տարրը) ձևավորված և որոշակի թվանիշ ձևույթով ձևավորված բառաձևեր:

Դիտարկենք *հոգնակիակերտ մասնիկների քերականական արժեքը* հին հայերենում:

ա) Հոգնակիակերտ –ք մասնիկի քերականական արժեքը

Հոգնակի թվի տիպաբանական ցուցիչն է -ք մասնիկը, որ ավելանում է եզակի ուղղականի հիմքին՝ ստեղծելով եզակի-հոգնակի հակադրություն՝ միաժամանակ արժևորելով մասնիկավոր տարբերակի քերականական նոր իմաստը[2]. *տիտան – տիտան+ք, այգի - այգի+ք, արքայ – արքայ+ք, քաղաք – քաղաք+ք, գետ - գետ+ք, ծով – ծով+ք* և այլն:

Այս կարգի բառաձևերի սերող հիմքի հոլովման բնույթը (տիպը) գործնական նշանակություն ունի. ակնհայտ է, որ վերոբերյալ բառերի ելակետային ձևերն անխտիր վերջադրական բնույթի հոլովում ունեն և պատկանում են ինչպես պարզ [տիտանայ-տիտանաց (Ա), արքայի-արքայից (Ի), գետոյ-գետոց (Ո), ծովու-ծովուց (Ու)], այնպես էլ խառը հոլովման [այգւոյ – այգեաց (Ո-Ա), քաղաքի – քաղաքաց (Ի-Ա)] և այլն:

---

[1] Ջահուկյան 1974, 158-161:

[2] Բագրատունի 1852, 6:

Այս կառուցատիպն են ստանում նաև այն բառերը, որոնք եզակի ուղղականի վերջին վանկում ունեն –իւ երկբարբառ (ենթարկվում են Ա ներքին թեքման). դրանց հոգնակի ուղղականը կազմվում է եզակի ուղղականից՝ նրա անփոփոխ ձևին ավելանալով – Ք հոգնակիակերտը (եզակի սեռականի թեք ձևը հոգնակիակազմությանը չի մասնակցում), ինչպես՝ անկիւն (անկեան) – *անկիւն+ք,* կորիւն (կորեան) – *կորիւն+ք,* քաջութիւն (քաջութեան) – *քաջութիւն+ք,* ուրախութիւն (ուրախութեան) – *ուրախութիւն+ք* և այլն:

Ներքին թեքման գոյականների հոգնակիակազմությունը որոշակիորեն տարբերվում է վերջադրական (արտաքին) թեքման գոյականների համատիպ կազմություններից: Նախապես նշենք, որ այս դեպքում էլ թվի քերականական կարգն արտահայտվում է վերջադրական մասնիկների միջոցով. այդ կազմություններում կարևոր նշանակություն ունի հոլովական հիմքը, որի վրա ավելանում է հոգնակիակերտ ցուցիչը: Նկատենք, որ երբ խոսում ենք ներքին թեքման մասին, ապա ակնհայտ է, որ նախ գործ ունենք արմատահնչյունի փոփոխության կամ ձայնդարձի երևույթի հետ. հնչյունափոխված հոլովական հիմքը այս դեպքում դառնում է թվակազմական հիմք: Հին հայերենում ներքին թեքում ստանում են Ա, Ե պարզ հոլովման պատկանող բառերը, ինչպես նաև Ի-Ա խառը հոլովում ունեցող բառերը:

Այս կարգի հոլովումներ ունեցող բառերը հոգնակի թվում թվակազմական տարբեր հիմքեր են ստանում: Եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ ներքին թեքման Ա և Ի-Ա հոլովման պատկանում են այն բառերը, որոնք եզակի ուղղականում վերջանում են Ն բաղաձայնով և նրան նախորդող որևէ ձայնորդով, իսկ Ե ներքին հոլովման պատկանող բառերը՝ Ր կամ Ղ բաղաձայններով և նրանց նախորդող որևէ բաղաձայնով, ապա կարող ենք ասել, որ նման բառերի հոգնակիի ձևերը կարող են հիմքերի տարբեր կառուցատիպեր ստանալ:

Այսպես, պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Ա և Ի-Ա ներքին թեքման ենթարկվող բառերը թեև վերջանում են Ն ձայնորդով, այնուամենայնիվ, դրանք միատեսակ կառուցվածք չունեն, որով էլ պայմանավորված է նրանց հոգնակիի հիմքակազմությունը:

Այս կարգի հոլովական հիմքերը ձևավորվում են ձայնդարձով կամ երկբարբառի պարզեցումով՝ հոգնակիակերտ մասնիկից առաջ.

(ը)ն – ուն+ք. ձուկ(ը)ն+ք – *ձկուն+ք* (ը>ու հնչյունափոխությամբ),
ում+(ը)ն –մունք. ուսում(ը)ն – ուսմուն+ք (ը>ու հնչյունափոխությամբ),
մ(ը)ն-մուն+ք. ատամ(ը)ն – ատամուն+ք (ը>ու հնչյունափոխությամբ),

(ը)ն –ին+ք. գառ(ը)ն – գառին+ք (ը>ի հնչյունափոխությամբ):

Այսպիսի կառուցատիպերում, ինչպես երևում է, արմատական –ու-ձայնավորը սղվում է:

Եթե ընդհանրացնենք *վերջադրական հոլովման* գոյականների թվի կարգի արտահայտությունը հոգնակի ուղղականում, կարող ենք առանձնացնել հիմքակազմության երկու կառուցատիպ. մի դեպքում հոգնակի ուղղականի համար սերող հիմք է դառնում եզակի ուղղականը (անփոփոխ ձևով), երկրորդ՝ հոգնակի ուղղականի հիմքը եզակի ուղղականի հնչյունական-ձևակազմական (փոփոխված) տարբերակն է[3]:

Ներքին թեքման բառերը հոգնակի ուղղականում հոլովահիմքի այլ կառուցատիպ ունեն: Ե հոլովման պատկանող բառերը եզակի ուղղականում ունեն *բաղաձայն+(ը)ղ* և *բաղաձայն+(ը)ր* հոլովահիմքեր. որոնց եզակի սեռականից հոգնակիակերտ Ք մասնիկի միջոցով կազմվում է հոգնակի ուղղականը, ինչպես՝ անգ(ը)ղ – *անգեղ+ք,* աստ(ը)ղ – *աստղ+ք,* կայս(ը)ր – *կայսեր+ք,* վագ(ը)ր – *վագեր+ք* (ը>ե հնչյունափոխությամբ): Այս կարգի բառերի հոգնակի ուղղղականի հիմքը, առանձին վերցրած, բառաձև է:

Սեռական-տրական հոլովներում գոյականի հոգնակի թիվը արտահայտության տարբեր միջոցներ ունի՝ պայմանավորված գոյականի հոլովման բնույթով. վերջինս էլ, իր հերթին, պայմանավորված է բառերի կառուցվածքային գործոնով (արմատական ձայնավոր կամ պարզ բնակերտ, ձևակազմական ցուցիչ, վերջնահանգի գաղտնավանկ և այլն): Նկատի ունենալով այս գործոնները՝ կարելի է ներկայացնել սեռական-տրականի հոգնակիակազմության վիճակը, որ պարտադիր ունենում է (մասնիկավոր) կցական կառուցատիպ:

Մի դեպքում հոգնակի սեռական-տրականի հիմքը համընկնում է եզակի սեռական-տրական հոլովաձևին, որ չունի հոլովակերտ մասնիկ. հոլովաձևն այս դեպքում հանդես է գալիս իբրև սերող հոլովահիմք: Այդպիսի հիմք ստանում են այն բառերը, որոնք պատկանում են Ի և ՈՒ պարզ վերջադրական հոլովման, հմմտ. սիրտ – սրտի – սրտի+ց, արքայ – արքայի – արքայի+ց, զարդ – զարդու – զարդու+ց, առաւօտ – առաւօտու – առաւօտու+ց և այլն:

Երկրորդ դեպքում հոգնակի սեռական-տրականի հիմքը համընկնում է եզակի սեռական-տրականի հիմքին. այս դեպքում հոլովակերտ մասնիկն

[3] Հմմտ. Պետրոսյան 1972, 125:

ընկնում է: Այդպիսի հիմք ստանում են այն բառերը, որոնք պատկանում են Ա և Ո պարզ վերջադրական հոլովման, հմմտ. տիտան - տիտանա-յ – տիտանա+g, հող – հողո-յ - հողո+g, աթոռ - աթոռո-յ - աթոռո+g և այլն:

Երրորդ դեպքում հոգնակի սեռական-տրականի հիմքը համընկնում է եզակի սեռական-տրականի հնչյունափոխված հիմքին: Դրանք այն բառերն են, որոնք եզակի ուղղականում ունեն *բաղածայն+(ը)ն, բաղածայն+(ը)ղ* և *բաղածայն+(ը)ր* հոլովահիմքեր, հմմտ. այծեամն - *այծեման - այծեման +g,* ծիծառն - *ծիծռան - ծիծռան+g,* անգղ – *անգեղ - անգեղ+g,* արկղ- *արկեղ - արկեղ+g,* ոսկր - *ոսկեր - ոսկեր+g,* կայսր - *կայսեր – կայսեր+g* և այլն:

Մեկ այլ դեպքում հոգնակի սեռական-տրականի հիմքը համընկնում է եզակի գործիականի հիմքին: Այսպիսի հիմք ստանում են այն բառերը, որոնք պատկանում են Ի-Ա, Ո-Ա վերջադրական և Ի-Ա ներդրական խառը հոլովումների:

Հմմտ. քաղաք – *քաղաքա-ւ – քաղաքա+g,* հրապարակ – *հրապարակա-ւ – հրապարակա+g* (Ի-Ա վերջադր.), այգի - *այգեա-ւ – այգեա+g,* տեղի – *տեղեա-ւ – տեղեա+g* (Ո-Ա վերջադր.) և անձն – *անձա(ն>)մ-բ – անձան+g,* հարսն - *հարսա(ն>)մ-բ – հարսան+g* և այլն[4]:

Հոգնակի հայցականի քերականական իմաստը բոլոր դեպքերում դրսևորվում է հոգնակի ուղղականի ք>ս հերթագայության միջոցով: Երկու մասնիկներն էլ կատարում են երկակի գործառույթ. հանդես են գալիս թե՛ իբրև հոլովակերտ և թե՛ իբրև հոգնակիակերտ մասնիկներ: Հոգնակի (ինչպես նաև եզակի) հայցականը կառուցվածքային այլ տարր էլ ունի (զ նախդիրը, որ կատարում է որոշյալ առման հոդի դեր: Հմմտ. հոգնակի հայցականի կազմությունը հոգնակի ուղղականից. տիտան – տիտան-ք – *(զ)տիտան+ս,* արքայ – արքայ-ք *-(զ)արքայ+ս,* նետ – նետ-ք –*(զ)նետ+ս,* ջուր – ջուր-ք – *(զ)ջուր+ս,* զարդ – զարդ-ք – *(զ)զարդ+ս,* ատամն – ատամուն-ք – *(զ)ատամուն+ս,* անգղ –անգեղ-ք – *(զ)անգեղ+ս,* քաղաք – քաղաք-ք – *(զ)քաղաք+ս,* անձն – անձին-ք –*(զ)անձին+ս,* այգի – այգի-ք – *(զ)այգի+ս* և այլն:

Բացառական հոլովի եզակի և հոգնակի ձևերը մասնիկավոր-կցական կառուցատիպի չեն. դրանք վերլուծական ձևեր են՝ *ի նախդիր+տրական*

---

[4] Ա. Աբրահամյանն այն կարծիքն է հայտնում, որ հոգնակի տրականը միանշանակ կազմվում է հոգնակի սեռականի նման. այսինքն՝ եզակի սեռականից (Ա. Աբրահամյան 1976, 22): Կարծում ենք՝ խառը հոլովման դեպքում հոգնակի տրականի սերող հիմք պետք է ընդունել եզակի գործիականի հիմքը:

հոլովածև կառուցատիպերով, հմմտ. տիտան – տիտանայ – ի տիտանայ և տիտանաց – ի տիտանաց, գետ –գետոյ – ի գետոյ և գետոց – գետոց և այլն:

Հոգնակի բացառականի քերականական իմաստի արտահայտման կապակցությամբ կարևոր դիտարկում ունի Հ. Պետրոսյանը. «Եթե *գետոց* ձևի մեջ *g* հոգնակերտ-հոլովակերտով արտահայտված են և՛ հոլովի, և՛ հոգնակիի իմաստներ, ապա *ի գետոց* բացառականի մեջ g-ի հոլովական իմաստավորումը մթագնած է. բացառականի հոլովական-տարածական իմաստը ձևավորվում է *ի* նախդրի և *գետոց* բառաձևի հարադրությամբ: *Ի* նախդիրը որևէ դեր չունի հոգնակիի քերականական իմաստի արտահայտման մեջ. նա ունի սոսկ տարածական հարաբերության իմաստ. հոգնակիի իմաստը տրված է *գետոց* բառաձևում՝ շնորհիվ *g* հոգնակերտի: Ց-ն ինքնին *ի գետոց* բաղադրության մեջ բացառական հոլովի ցուցիչ չէ: *Ի գետոց* ձևում գործ ունենք *գետոց* հոգնակի սեռական-տրականի ձևաբանական վերաարժեքավորման հետ»[5]:

Հոգնակի ներգոյականի իմաստն արտահայտության տեսակետից չի տարբերվում հոգնակի բացառականի կառուցատիպից. երկուսն էլ նախդրավոր-վերլուծական կառույցներ են. հոգնակի ներգոյականն ունի *ի+հոգնակի անորոշ հայցական* կառուցատիպ, ինչպես՝ ծովք – (զ)ծովս – *ի ծովս,* միտք –(զ)միտս – *ի միտս,* ջուրք – (զ)ջուրս – *ի ջուրս,* անձինք – (զ)անձինս - *յանձինս,* այգիք – (զ)այգիս – *յայգիս* և այլն[6]:

Վերոբերյալ կառուցատիպերում բառաձևի –ս մասնիկը ներգոյականի իմաստի հոլովակերտ մասնիկ չէ. նրա քերականական իմաստը տվյալ կառուցատիպերում մթագնած է, այն ոչ թե հոլովական, այլ թվակազմական ցուցիչ է, և, ինչպես հոգնակի բացառականում, այստեղ նույնպես հոլովական-տարածական իմաստը դրսևորվում է Ի նախդրով և հոգնակի հայցականով: Այստեղ նույնպես (ի ծովս, յայգիս և այլ ձևերում) գործ ունենք հոգնակի հայցականի ձևաբանական վերարժեքավորման իրողության հետ:

Հոլովական համակարգում հոգնակի թվի քերականական իմաստը, ինչպես տեսնում ենք, արտահայտվում կամ դրսևորվում է մասնիկավորմամբ: Ընդ որում, հոգնակի ուղղական, սեռական, տրական, հայցական և բացառական հոլովներում հանդես եկող հոլովակերտները կատարում են երկակի գործառույթ. դրանք և՛ հոլովակերտներ են, և՛ թվակազմական

[5] Պետրոսյան 1972, 131:

[6] Խաչատրյան, Թոսունյան 2004, 38:

ցուցիչներ (բացառականում՝ վերապահումով): Հոգնակի ուղղականի -ք, սեռական-տրականի -ց, հայցականի –ս մասնիկները միաժամանակ ցույց են տալիս տվյալ բառի թե՛ հոլովը և թե՛ հոգնակի թվի իմաստը: Հոգնակի գործիականը մյուս հոլովների կառուցատիպերից որոշակիորեն տարբերվում է մասնիկների գործառական դերով: Եթե մյուս հոլովներն ունեն մեկական մասնիկ, որ երկարժեք է, ապա գործիականում կան երկու մասնիկներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր որոշակի իմաստն ու դերը:

Այսպես, հոգնակի գործիականը կազմվում է եզակիի հիմքից՝ համապատասխանաբար -վ, –ւ կամ –բ հոլովակերտներով. *գեպո-վ, նեպի-ւ, տիտանա-ւ, անձամ-բ* և այլն: Հոգնակիում այս ձևերին ավելանում է –ք մասնիկը՝ բառաձևին հաղորդելով հոգնակի թվի իմաստ. *գեպո-վ+ք, նեպի-ւ+ք, տիտանա-ւ+ք, անձամ-բ+ք* և այլն:

Անեզական գոյականների (հոգնակի) գործիականը կազմվում է համաբանությամբ՝ հավանական եզակի հոլովական հիմքից. խելք – խելա-ւ+ք, կամք - կամա-ւ+ք, կարծիք – կարծեա-ւ+ք, կուռք – կռո-վ+ք: Նույնը՝ հավաքական (անեզական) հատուկ անունների դեպքում՝ Հայք - *Հայո-վ+ք,* Պարսք – *Պարսի-ւ+ք,* Գուգարք –*Գուգարա-ւ+ք* և այլն:

Գործիականի վերոբերյալ հոգնակի ձևերում –ք մասնիկը հոլովակերտի դեր չունի (մինչդեռ հոգնակի ուղղականում այն և՛ հոլովակերտ է, և՛ հոգնակիակերտ). այստեղ այն ունի միայն հոգնակի թվի իմաստ: Քանի որ մյուս հոլովների հոգնակի թվում միևնույն մասնիկը երկարժեք է. հոլովի և թվի իմաստները հանդես են գալիս միաձույլ՝ միևնույն մասնիկով, ուստի դժվար է կռահել, թե նախապես ո՞ր իմաստն է հասնում մեր գիտակցությանը՝ հոլովի՞, թե՞ թվի, ապա գործիականում դա հստակ բաշխված է՝ պայմանավորված մասնիկների դիրքով: Հոգնակի գործիականում նախապես դիրքավորված է հոլովակերտ մասնիկը (-վ, -ւ, -բ), որն արտահայտում է հոլովական իմաստ, որին հաջորդում է –ք մասնիկը, որն արտահայտում է հոգնակի թվի քերականական իմաստ: Փաստորեն, մասնիկների դիրքային բաշխվածության առումով հոգնակի գործիականը յուրահատկություն է ցուցաբերում. այդ մասնիկների քերականական իմաստների հերթագայությունը պայմանավորված է լեզվամտածողությամբ, որ արդի հայերենում անընկալելի է:

Եթե հին հայերենի հոգնակի գործիականի բառաձևերը՝ մասնիկների համապատասխան դասավորությամբ և համարժեք իմաստներով, փորձենք ներկայացնել արդի հայերենում, ապա կունենանք մի վիճակ, որտեղ

հոլովական իմաստին հաջորդում է թվի իմաստը, հմմտ. *այգեա-ւ-ք* (այգի-ով-ներ), *կոռ-վ-ք* (կուռք-ով-ներ) և այլն[7]:

Հոլովական հարացույցում հոգնակի գործիականը մյուս հոլովներին հակադրվում է *երկմասնիկ կառուցատիպով* (հոլովակերտ-հոգնակիակերտ մասնիկներով):

բ) Թվակազմական այլ մասնիկների գործառական արժեքը

Հոլովական հարացույցում թվի քերականական իմաստը մենք դիտարկեցինք այնպիսի բառերի և բառաձևերի արտահայտության պլանում, որոնք հոգնակիության իմաստն արտահայտում են –ք մասնիկի միջոցով: Այդ մասնիկը որոշակի դեպքերում, պայմանավորված հոլովաձևի հնչյունական-ձևակազմական փոփոխություններով, ստանում է *-ունք, -ինք, -անք* (նաև՝ -ոնք) ձևեր, թեև, ընդհանուր առմամբ, այդ վերակազմավորումներում իմաստի բեռնվածությունը դարձյալ կրում է –ք մասնիկը:

Թվակազմության նորմը սահմանում է, որ գրաբարի հոգնակիակազմ հիմքերը զուգորդվում են *-ք, -ց,-ս* մասնիկների հետ, սակայն կարող են հանդիպել նաև տարբեր հոգնակերտներով հիմքեր: Տվյալ դեպքում *բուն հոգնակերտ // հավաքական հոգնակերտ* հակադրության մեջ կա գործածության անհամարժեքություն:

Այդ իրողությունը մեկ անգամ ևս հաստատում է այն տեսակետը, որ հին հայերենում թվի քերականական իմաստի արտահայտման միակ միջոցը մասնիկավորումն է, որով նա բավարարում է կցական տիպի լեզուներին ներկայացվող պահանջները: Այդ մասնիկներն են՝

-ական - գուսանական, զաւրական[8], գրաստական,

- ան - իշան, ձիան,

- անի - երիցանի, աւագանի, նամականի, ջաղացանի, ամրոցանի,

---

[7] Գ. Ջահուկյանը, դիտարկելով հին հայերենի հոլովման համակարգում առկա շեղումներն ու բացառությունները, նկատում է, որ հոգնակի գործիականում կայունանում է կցականության տարրը, որին նպաստում է հոգնակերտ մասնիկների և հոլովական վերջավորությունների հաջորդման կարգը, որ համընկնում է բարբառների և գրական աշխարհաբարի համապատասխան մասնիկների հաջորդման կարգի հետ (Ջահուկյան 1959, 93): Թեև, ինչպես տեսանք վերևում, հին հայերենի հոգնակի գործիական հոլովի և թվի մասնիկների դասավորության կարգը չի համապատասխանում աշխարհաբարի համարժեք կառույցներին:

[8] *Գուսանական* և *զաւրական* բառաձևերը համանունական զույգ են կազմում *գուսանական* (երաժշտական) և *զաւրական* (զինվորական) բառերի հետ. վերջիններս հոլովվում են Ի-Ա վերջադրական խառը հոլովմամբ: Հմմտ. գուսանականի – գուսանականաց, զաւրականի – զաւրականաց:

- եան - բերդեան, գիւղեան, գրեան, գործեան, թղթեան, խորդեան, մոգեան, շաբաթեան, նախարարեան,

- եար -բանեար, վանեար, վարժեար,

- նեար - նաւկնեար, բարձկնեար,

- որեայ //-որայ - արտորեայ, վանորայ,

- տի – մանկտի ոսկրոտի, փորոտի և այլն[9]:

Իբրև հոգնակի իմաստի կրողներ՝ նման մասնիկներ ունեցող բառերից շատերը հոլովվում են նաև եզակի թվի ձևով, սակայն, ինչպես նկատում է Հ. Պետրոսյանը, «նրանց առանձնահատկությունն այն է, որ հիմնականում հետևում են կցական կառուցածևի, *հիմք+հոգնակերտ+ հոլովակերտ* կաղապարին՝ թեք հոլովաձևերում»[10]: Հմմտ.

մանկտի- մանկտւոյ-մանկտւոյ – (զ)մանկտի – ի մանկտւոյ – մանկտւով,

երիցանի - երիցանւոյ - երիցանւոյ - (զ)երիցանի - յերիցանւոյ - երիցանւով,

բերդեան - բերդենոյ - բերդենոյ (զ)բերդեան – ի բերդենոյ - բերդենով,

որեար – որերոյ – որերոյ – (զ)որեար –յորերոյ - որերով,

վանեար – վաներոյ –վաներոյ – (զ)վանեար – ի վաներոյ - վաներով:

Ըստ ՆՀԲ-ի վկայությունների՝ այդ բառերը հոլովվում են նաև հոգնակի թվով՝ ստեղծելով եզակի-հոգնակի հակադրություն: Ըստ էության, դրանց հոգնակի հոլովաձևերը պարզապես պահպանում են հոգնակիի հոլովման ձևական կաղապարը. դրանց ելակետային մասնիկավոր կազմություններում հոգնակիության իմաստը նվազում է. հոգնակի-հավաքականության բուն իմաստն արտահայտվում է վերջին մասնիկի միջոցով: Հմմտ.

արտորեայ – արտորէի – արտորէի – (զ)արտորեայ – յարտորէէ - արտորէիւ,

արտորեայք –արտորէից – արտորէից – (զ)արտորեայս – յարտորէից - արտորէիւք,

արտորայ – արտորայի – արտորայի – (զ)արտորայ – յարտորայէ - արտորայիւ,

արտորայք – արտորայից – արտորայից – (զ)արտորայս – յարտորայից- արտորայիւք[11],

---

[9] Աբրահամյան 1976, 20: Վ. Առաքելյանը նկատում է, որ այդ մասնիկները կիրառվում են ավելի հավաքականություն արտահայտելու համար, բայց և նրանց հոգնակիի նշանակությունը նույնպես կենդանի է (Առաքելյան 2008, 19): Է. Թումանյանն ավելացնում է նաև հետևյալ հոգնակի-հավաքական մասնիկները՝ *-ական, -ստան, -նի, -ուի* (Туманян 1971, 175):

[10] Պետրոսյան 1972, 140:

[11] Հոգնակիում ունի զուգաձևություն. արտորայք – արտորայոց – արտորայոց – (զ)արտորայս – յարտորայոց – արտորայովք:

վանորայ - վանորայոյ – վանորայոյ - (զ)վանորայ - ի վանորայոյ - վանորայով,

վանորայք - վանորայց - վանորայց - (զ)վանորայս - ի վանորայց - վանորայովք,

վանորեայ - վանորէի - վանորէի - (զ)վանորեայ - ի վանորէէ - վանորէիւ,

վանորեայք - վանորէից - վանորէից - (զ)վանորեայս - ի վանորէից - վանորէիւք[12]:

Հաճախ միևնույն սերող հիմքին բաղադրվում են մեկից ավելի հոմանիշ թվակազմական ձևույթներ՝ առաջացնելով թվակազմական զուգաձևություններ: Այդ կարգի զուգաձևերից յուրաքանչյուրը մյուսի նկատմամբ ցուցաբերում է իմաստային տարբերություն, որը պայմանավորված է բառիմաստի ընդլայնման գործոնով.

գիր - *գիրք // գրեան // գրեանք,* թուղթ - *թուղթք // թղթեր // թղթեան,* սերմն - *սերմունք // սերմանք // սերմանիք,* բարի - *բարիք // բարիոք // բարուք // բարեւք* և այլն:

Այս կարգի բառերը հոգնակի թվի հոլովական հարացույցում հոլովական հիմքերի տարբեր կառուցատիպեր ունեն, տարբերվում են հոլովման տիպերով (բնույթով), ինչպես նաև ունեն իմաստային տարբերություններ: Հմմտ.

գիրք – գրոց – գրոց- (զ)գիրս – ի գրոց - գրովք,

գրեան – գրենոյ – գրենոյ - (զ)գրեան – ի գրենոյ - գրենով,

գրեանք – գրենաց //գրեանց - գրենաց //գրեանց – (զ)գրեանս - ի գրեանց //ի գրենաց – գրենաւք(օք)[13]:

Հին հայերենում թվակազմությունը ձգտում էր միակերպության՝ մանավանդ ձևաբանական այլ կարգերի համեմատությամբ, սակայն հոգնակերտ հավաքականների մասնակցությամբ տարբերակային կազմավորումները զգալիորեն շատ են:

Զուգաձևությունները թվի քերականական կարգի տեսանկյունից յուրահատկություն են դրսևորում (հոլովական հիմքերի տարբերակների առումով):

Այսպես՝ հին հայերենի հոգնակի ուղղական հոլովում, ըստ հիմնային տարբերակների, զուգաձևություն են դրսևորում այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ ծին - *ծինք // ծնունք,* կողմն - *կողմանք // կողմունք,* երագ - *երագք // երագունք,* աղանդ – *աղանդք // աղանդիք // աղանդինք* և այլն:

---

[12] Հոգնակիում ունի զուգաձևություն. վանորեայք – վանորեաց – վանորեաց – (զ)վանորեայս – ի վանորեաց – վանորեաւք:

[13] *Գրեան - գրեանք* բառաձևերը անկախ բառական արժեքով նշանակում են *Աստվածաշունչ մատյան:*

Պետք է նկատել, որ այս կարգի զուգաձևությունների բոլոր եզրերը չունեն հոլովական հարացույց. սովորաբար հոլովվում է դրանցից մեկը: Այսպես, *ծին* և *ծնունք* զուգահեռ ձևերից հոլովվում է *ծինք* բառը, *կողմանք //կողմունք* ձևերից՝ *կողմանք* կազմությունը, *աղանդք // աղանդիք // աղանդինք* ձևերից՝ *աղանդք // աղանդիք* կազմությունները և այլն[14]: Հմմտ.

ծինք – ծնից – ծնից – (զ)ծինս – ի ծնից - ծնիւք,

կողմանք – կողմանց – կողմանց – (զ)կողմանս – ի կողմանց - կողմամբք,

աղանդք – աղանդոց – աղանդոց – (զ)աղանդս – յաղանդոց - աղանդովք[15],

աղանդիք – աղանդեաց – աղանդեաց – (զ)աղանդիս – յաղանդեաց - աղանդեաւք:

Սակավադեպ հանդիպում են ինչյունափոխված հոգնակիակազմ հիմքերով. *բանակատեղք // բանակտեղք, աղբիւրք // աղբերք* և այլն:

Այս կարգի բառերը հոգնակի թվի հոլովական հարացույցում ցուցաբերում են ինչպես ներքին, այնպես էլ արտաքին թեքման օրինաչափություններ: Հմմտ.

աղբիւրք – աղբիւրաց –աղբիւրաց – (զ)աղբիւրս – յաղբիւրաց - աղբիւրաւք,

աղբիւրք – աղբերաց – աղբերաց – (զ)աղբիւրս – յաղբերաց - աղբերաւք,

աղբերք – աղբերց – աղբերց – (զ)աղբերս – յաղբերց – աղբերբք:

Դիտարկենք *թվակազմական այն զուգաձևությունները,* որոնք հոգնակիության իմաստն արտահայտում են միևնույն հիմքին ավելացող հոմանիշ տարբեր (հոգնակերտ) մասնիկների միջոցով: Բուն և հավաքական հոգնակերտներով կազմությունները գործածության հաճախականության տեսակետից հին հայերենում համարժեք չեն. մատենագիտական վկայություններում հանդիպում են վիճակագրական տարբեր հաճախականությամբ: Այսպես՝

-ք // - եայք՝	համատոհմք // համատոհմեայք
- ք // - ունք՝	եպիսկոպոսք /եպիսկոպոսունք
-եան // -եայք՝	որկորեան // որկորեայք
-ստայք // ստեայք՝	գեօղաստայք // գեօղաստեայք
-անք // - եանք՝	ախոյանք // ախոյեանք
-ք // - եան՝	շաբաթք // շաբաթեան,
-իք // -եան՝	ջորիք // ջորեան
-ք // -իք // -եան՝	հեսկք // հեսկիք // հեսկեան
-եար // -եանք՝	որեար // որեանք
-ան // -անք // -եան՝	իշան // իշանք // իշեան
-որայ //-որեայ // որեայք՝	վանորայ // վանորեայ // վանորեայք:

[14] ՆՀԲ-ն և ԱԲ-ն մյուս ձևերի համար հոլովական ցուցիչներ չեն նշում: Հմմտ. նաև ԳԲ և ԳՈՒՍ բառարանների վկայությունները:

[15] Հոգնակի թվում զուգաձևություն է ցուցաբերում. *աղանդից // աղանդաց:*

Այս զուգաձև կազմությունները հոլովի և թվի քերականական ի-մաստներն արտահայտում են մասնիկավորմամբ՝ ենթարկվելով տարբեր հոլովումների, հմմտ.

եպիսկոպոսք – եպիսկոպոսից – եպիսկոպոսից – (զ)եպիսկոպոսս – յեպիսկոպոսից - եպիսկոպոսիք,

եպիսկոպոսունք - եպիսկոպոսա(ն)ց, եպիսկոպոսա(ն)ց, (զ)եպիսկոպոսունս, յեպիսկոպոսա(ն)ց, եպիսկոպոսամբք,

համատոհմք - համատոհմից, համատոհմից, (զ)համատոհմս, ի համատոհմից, համատոհմիք,

համատոհմեայք - համատոհմեայց, համատոհմեայց, (զ)համատոհմեայս, ի համատոհմեայց, համատոհմեաւք,

ախոյանք – ախոյանից // ախոյանաց, ախոյանից // ախոյանաց, (զ)ախոյանս, յախոյանից // յախոյանաց, ախոյանիք,

ախոյեանք - ախոյանից, ախոյանից, (զ)ախոյանս, յախոյանից, ախոյանիք:

- *Ութիւն* ածանցով մի շարք կազմություններ արտահայտում են հոգնակի-հավաքական իմաստներ. դրանք զուգաձևություն են ստեղծում *-ք, -ան, -անք* մասնիկներով տարբերակային ձևերի հետ: Ինչպես՝

աղանդութիւն // աղանդք // աղանդիք// աղանդինք

գերութիւն // գերիք

մարդկութիւն // մարդիկ // մարդկան,

զինուորութիւն // զինուորք

ընտանութիւն // ընտանիք,

կուսութիւնք // կուսանք,

հայրապետութիւն // հայրապետք,

աշակերտութիւն // աշակերտք,

քահանայութիւն // քահանայք և այլն:

Այս զուգաձևությունները հոգնակի թվի հոլովական հարացույցում պատկանում են տարբեր հոլովատիպերի. *-ութիւն* ածանցով կազմությունները ենթարկվում են ներքին թեքման, իսկ հոգնակի-հավաքական մասնիկներով կազմությունները՝ արտաքին թեքման: Հմմտ.

գերութիւնք - *գերութեան*-ց, *գերութեան*-ց, (զ)գերութիւնս, ի *գերութեան*-ց, *գերութեամբ*-ք,

գերիք - գերեաց - գերեաց - (զ)գերիս - ի գերեաց - գերեաւք,

ընտանութիւն – ընտանութեան – ընտանութեան –(զ)ընտանութիւն – յընտանութենէ - ընտանութեամբ,

ընտանիք – ընտանեաց – ընտանեաց – (զ)ընտանիս – յընտանեաց – ընտանեաւք:

Ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, հոգնակի թվում զուգաձևությունն արտահայտվում է՝

ա) բուն հոգնակերտ //հավաքական հոգնակերտ մասնիկներով (-ք // -եայք, -ք // -եան, -իք // -եան, -ք // -իք // -եան,- ք // -ունք և այլն),

բ) հավաքական հոգնակերտ // հավաքական հոգնակերտ մասնիկներով (-եան // -եայք, ստայք // ստեայք, -անք // -եանք, եար // -եանք, -ան // -անք // -եան, -որայ // -որեայ //-որեայք և այլն):

Եզրակացություններ

Ինչպես ցույց է տալիս գոյականի թվակազմության քննությունը, հին հայերենում հոգնակի թվի տիպաբանական ցուցիչն է -ք մասնիկը, որ որոշակի դեպքերում, պայմանավորված հոլովաձևի հնչյունական-ձևակազմական փոփոխություններով, ստանում է *-ունք, -ինք, -անք* (նաև՝ -ոնք) ձևեր, թեև, ընդհանուր առմամբ, այդ վերակազմավորումներում իմաստի բեռնվածությունը դարձյալ կրում է –ք մասնիկը: Հանդիպում են *թվակազմական զուգաձևությունները,* որոնք հոգնակիության իմաստն արտահայտում են միևնույն հիմքին ավելացող հոմանիշ տարբեր (հոգնակերտ) մասնիկների միջոցով, ինչպես՝ *-ք // -եայք, -ք// -ունք, -եան // -եայք, -անք //-եան, -ք// -իք // -եան, -ան // -անք //-եան* և այլն:

Այդ զուգաձև կազմությունները հոլովի և թվի քերականական իմաստներն արտահայտում են մասնիկավորմամբ և ենթարկվում են տարբեր հոլովումների:

Հին հայերենում թվակազմությունը տիպաբանորեն կցական կառուցատիպի է:

Գրականություն

Աբրահամյան Ա. 1976, Գրաբարի ձեռնարկ, Երևան, «Լույս», 558 էջ:

Առաքելյան Վ. 2008, Գրաբարի քերականություն, Երևան, «Վիամիր», 343 էջ:

Բագրատունի Ա. 1852, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, ի Վենետիկ, ի վանս Սրբոյն Ղազարու, 744 էջ:

Խաչատրյան Լ., Թոսունյան Գ. 2004, Գրաբարի դասագիրք, Երևան, «Զանգակ - 97», 384 էջ:

Պետրոսյան Հ. 1972, Գոյականի թվի կարգը հայերենում, ԵՊՀ հրատ., 453 էջ:

Ջահուկյան Գ. 1974, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 588 էջ:

Ջահուկյան Գ. 1959, Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, ԵՊՀ հրատ., 409 էջ:
Туманян Э. 1971, Древнеармянский язык, Москва, «Наука», 448 с.

Բառարաններ (համառոտագրություններով)

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի 1836-1837, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, հ. Ա (1140 էջ), Բ (1067 էջ):
ԱԲ - Առձեռն բառարան հայկազնեան լեզուի 1865, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն Ղազարու, 849 էջ:
ԳԲ –Ղազարեան Ռ. 2000, Գրաբարի բառարան, Երեւան, ԵՊՀ հրատ., հ. Ա (684 էջ), հ. Բ (657 էջ):
ԳՈՒՍ – Խաչատրեան Լ. 2016, Գրաբարի ուսումնական բառարան, Վենետիկ, Մխիթարեան հրատարակչատուն, 448 էջ:

ԳՈՅԱԿԱՆԻ ԹՎԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լալիկ Խաչատրյան, Լիլիթ Խաչատրյան

Ամփոփում

Հին հայերենում հոգնակի թվի տիպաբանական ցուցիչն է -ք մասնիկը, որ որոշակի դեպքերում, պայմանավորված հոլովաձևի հնչյունական-ձևակազմական փոփոխություններով, ստանում է *-ունք, -ինք, -անք* (նաև՝ -ոնք) ձևեր, թեև, ընդհանուր առմամբ, այդ վերակազմավորումներում իմաստի բեռնվածությունը դարձյալ կրում է –ք մասնիկը:

Վերջադրական հոլովման գոյականների թվի կարգն ունի երկու կառուցատիպ. մի դեպքում հոգնակի ուղղականի համար սերող հիմք է դառնում եզակի ուղղականը (անփոփոխ ձևով), երկրորդ՝ հոգնակի ուղղականի հիմքը եզակի ուղղականի հնչյունական-ձևակազմական (փոփոխված) տարբերակն է:

Ներքին թեքման ենթարկվող բառերի հոլովական հիմքերը ձևավորվում են ձայնդարձով կամ երկբարբառի պարզեցումով՝ հոգնակիակերտ մասնիկից առաջ.

(ը)ն – ուն+ք. ձուկ(ը)ն+ք – *ձկուն+ք* (ը>ու հնչյունափոխությամբ),
ում+(ը)ն – մունք. ուսում(ը)ն – ուսմուն+ք (ը>ու հնչյունափոխությամբ),
մ(ը)ն - մուն+ք. ատամ(ը)ն – ատամուն+ք (ը>ու հնչյունափոխությամբ),
(ը)ն – ին+ք. գառ(ը)ն – գառին+ք (ը>ի հնչյունափոխությամբ):

Հոլովական հիմքերի վրա ավելանում է հոգնակիակերտ ցուցիչը:

Հանդիպում են *թվակազմական զուգաձևությունները,* որոնք հոգնակիության իմաստն արտահայտում են միևնույն հիմքին ավելացող հոմանիշ տարբեր (հոգնակերտ) մասնիկների միջոցով, ինչպես՝ *- ք // -եայք, -ք// -ունք, –եան //-եայք, -անք// -եան, -ք// -իք// -եան, -ան //-անք //-եան* և այլն: Այդ

կարգի բառերը քերականական իմաստներն արտահայտում են մասնիկավորմամբ և ենթարկվում են տարբեր հոլովումների:

Բանալի բառեր՝ թվի կարգ, հոգնակի թիվ, թվակազմական իմաստ, մասնիկավորում, արտաքին և ներքին թեքում, կառուցատիպ, սերող հիմք:

ВЫРАЖЕНИЕ ГРАММАТИЧЕСКОЙ КАТЕГОРИИ ЧИСЛА СУЩЕСТВИТЕЛЬНОГО В ДРЕВНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Лалик Хачатрян, Лилит Хачатрян

Резюме

В древнеармянском языке частица –ք является типологическим указателем множественного числа, который, в некоторых случаях, в зависимости от фонетико-морфологических изменений, принимает формы *-ունք, -ինք, -անք* (-ոնք), хотя в подобных преобразованиях смысловую нагрузку опять-таки несет частица –ք:

Категория числа существительных с постпозиционным склонением имеет две структуры:

а. именительный падеж единственного числа является производной основой для множественного именительного (с неизменяемой формой);

б. основа множественного именительного является фонетико-морфологическим вариантом именительного падежа, употребляемого в единственном числе.

Склоняемые основы слов с внутренней флексией образуются благодаря альтернации или упрощению дифтонга перед частицей, образующей множественное число;

(ը)ն-ուն+ք. ձուկ(ը)ն+ք-*ձկուն+ք,* рыба-рыбы (чередование ը>ու),

ում+(ը)ն-մունք. ուսում(ը)ն-ուսմուն+ք, обучение-обучения (чередование ը>ու),

մ(ը)ն-մուն+ք. ատամ(ը)ն-ատամուն+ք, зуб-зубы (чередование ը>ու),

(ը)ն-ին+ք. գառ(ը)ն-գառին+ք, ягненок-ягнята (чередование ը>ի):

Частица множественного числа добавляется к склоняемым основам.

Имеются числообразовательные парные формы, которые выражают значение множественного числа добавлением различных синонимичных частиц к той же основе; *-ք//-եայք, -ք//-ունք, -եան//-եայք, -անք//-եան, -ք//-*

իք//-եան, -ան//-անք//-եան. Подобные слова выражают грамматические значения с помощью аффиксации и имеют разные склонения.

Ключевые слова – категория числа, множественное число, число-образовательное значение, аффиксация, внешняя и внутренняя флексия, структурный тип, производная основа.

THE EXPRESSION OF GRAMMATICAL CATEGORY OF NUMBER OF NOUN IN OLD ARMENIAN

Lalik Khachatryan, Lilit Khachatryan

Abstract

The typological index of plural number is particle –ք, which, in some cases, conditioned by case sound-formal changes, takes *-ունք, -ինք, -անք* (also-ոնք). On the whole, in those recompositions particle –ք again bears charge of meaning.

The category of number of postpositional declension nouns has two structural types.

a. singular nominative case becomes a derivate stem for plural nominative (without any changes),

b. the stem of plural nominative is a sound-formal (changed) variant of singular nominative.

The declensional stems of words with internal flexion are formed with vowel alternation or simplification of diphtong before plural-forming particle

(ը)ն – ուն+ք. ձուկ(ը)ն+ք – *ձկուն+ք ; fish-fish* (sound interchange ը>ու),

ում+(ը)ն – մունք. ուսում(ը)ն – ուսմուն+ք, study-studies (sound interchange ը>ու),

մ(ը)ն - մուն+ք. ատամ(ը)ն – ատամուն+ք, tooth-teeth (sound interchange ը>ու),

(ը)ն – ին+ք. գառ(ը)ն – գառին+ք, sheep-sheep (sound interchange ը>ի).

The plural-forming index is added to declensional stems.

There are number-forming parallel forms which express meaning of plurality by adding many different synonym (plural-forming) particles to the same stem, like *-ք //-եայք, -ք //-ունք, -եան //-եայք, -անք //-եան, -ք// -իք// -եան, -ան //-անք //-եան* etc. Such words express grammatical meanings through affixation and have different declensions.

Key words – category of number, plural number, meaning of number-formation, affixation, external and internal flexion, structural type, derivative stem.